

## ՄԱՐՏԻՆ ՑՈՒԱԿԻ ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆ

Ծնվել է 1938թ. ապրիլի 4-ին:

1944-1956թթ. սովորել է Չայկովսկու անվան երաժշտական դպրոցում:

1956-1969թթ. սովորել է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի դաշնամուրի և կոմպոզիցիայի բաժնում:

1961-1963թթ.՝ «Մոսկվա» կինոթատրոնի նվագախմբի ղեկավար:

1963-1966թթ.՝ մի շարք գեղարվեստական ինքնագործունեության խմբերի ստեղծում և ղեկավարում:

1966-1972թթ.՝ Հայկական ռադիոյի և հեռուստատեսության Էստրադային նվագախմբի ստեղծում և ղեկավարում:

1972-1974թթ.՝ Ստանիսլավսկու թատրոնի երաժշտական բաժնի վարիչ:

1974-1990թթ.՝ Կոմպոզիտորների տան գեղարվեստական ղեկավար, Հայ Համերգի Էստրադային բաժնի պետ:

1990թ. մինչ օրս՝ Ռադիոյի Էստրադային - սիմֆոնիկ նվագախմբի դիրիժոր, խորհրդատու, դաշնակահար:

1990թ. ստացել է ՀՀ արվեստի վաստակավոր գործչի կոչում:

1997թ. մինչ օրս՝ Կոնսերվատորիայի պրոֆեսոր:

2007թ. շնորհվել է Երևանի պատվավոր քաղաքացու կոչում:

Հեղինակ է մի շարք սիմֆոնիկ, կամերային, երգչախմբային ստեղծագործությունների, ինչպես նաև 150 ներկայացումների և 40 ֆիլմերի երաժշտությունների՝ «Մենավոր ընկուզենի», «Կարոտ», «Բարև, ես եմ», «Սարոյան եղբայրներ», «Ապրեցեք երկար», «Տեղն արևի տակ» և շատ ուրիշներ:

Ամուսնացած է ունի 2 զավակ, 3 թոռ և մեկ ծոռ:

Անկուսակցական է:

